

Երիտասարդական հանդիպում Հայդելբերգում

Մարտի 19-ին Բադեն-Վյուրթեմբերգի Հայ Համայնքի Երիտասարդական Հանձնախումբը նախաձեռնել էր երիտասարդական հանդիպում: Տարածաշրջանի տարբեր քաղաքներից ժամանած մի շարք երիտասարդներ հանդիպեցին և հրաշալի ժամանակ անցկացրեցին Գերմանիայի նշանավոր ուսանողական քաղաք՝ Հայդելբերգում, ծանոթացան քաղաքում բնակվող հայ ընտանիքների հետ և վայելեցին նրանց ջերմ ընդունելությունը:



Հայդելբերգը հայտնի է ոչ միայն հրաշալի բնությամբ, յուրահատուկ ճարտարապետությամբ և կուլտրիտային միջնադարյան փողոցներով և տներով, այլ նաև բավական հետաքրքիր պատմությունով: Որպեսզի ծանոթանան քաղաքի ու Գերմանիայի պատմության հետ, երիտասարդները այցելեցին Գերմանիայի, ժողովրդի կողմից ընտրված, առաջին նախագահ՝ Ֆրիդրիխ Էբերթի տուն-թանգարանը, որտեղ նրանց սպասում էր հայ ժողովրդի բարեկամ, Պրոֆ. Դր. Բերնդ Բրաունը: Վերջինս երիտասարդների հետ շրջեց տուն-թանգարանով, որը բավականին հետաքրքիր էր 19-րդ դարի վերջին՝ քաղաքում տիրող կուլտրիտը զգալու համար, և ծանոթացրեց երիտասարդներին այդ ժամանակաշրջանում Գերմանիայի գաղափարական և սոցիալ-տնտեսական ձևափոխումների, ինչպես նաև նախագահ Ֆրիդրիխ Էբերթի գործնելության մասին:



ճաշից հետո շարունակվեց քաղաքի և Նրա պատմության բացահայտումը. Երիտասարդները այցելեցին Յայդելբերգի ամրոցը: Յուրաքանչյուրը ծանոթացրեց երիտասարդներին ամրոցի ու քաղաքի պատմությանը: Յայդելբերգի ամրոցը քաղաքի խորհրդանշանն է ու Գերմանիայի ամենահայտնի պատմամշակութային համալիրներից:

Յետաքրքիր էր իմանալ, որ մինչև ամրոցի ավիրումը իրավահաջորդների պատերազմում, այն եղել է Պֆալցի իշխանների նստավայրը: 1689 թվականին ամրոցը ավիրվել է Լուի XIV-ի զինվորների կողմից, ապա 1693 թվականի սեպտեմբերի 6-ին պայթեցվել ֆրանսիացի պիոներների կողմից, որից հետո Յայդելբերգի ամրոցը միայն մասամբ է վերականգնվել: Այն բանից հետո, երբ 1764 թվականի հունիսի 24-ին կայծակը հարվածեց մասամբ վերանորոգված համալիրին, վերականգնումը կասեցվեց և այն ամբողջությամբ այլևս երբեք չվերանորոգվեց:

Նեկարի Կարմիր ավազաքարից պատրաստված ամրոցի ավերակները բարձրանում են Զյոնիգսշթուլի հյուսիսային լանջից մոտ 80 մետր և իշխող տեղ զբաղեցնում հին քաղաքի ընդհանուր պատկերում: Օտտոհայնրիխսբաուն՝ ամրոցի պալատական շենքերից մեկը, գերմանական մաներիզմի կարևորագույն շենքերից է: Այժմ այն Եվրոպայի ամենաշատ այցելվող զբոսաշրջային վայրերից մեկն է:



Ամրոցը բավականին տպավորիչ էր: Նրա արտաքին պատերից մեկի՝ հույս, հավատ, սեր և արդյունքում խորհրդանշող արձանախմբի հետ նկարն ունի խորհրդանշական բնույթ և կարևոր ասելիք (կոչ) մեր սիրելի երիտասարդ համայնքի անդամներին և հայրենակիցներին՝ զինվելու հույսով, հավատով, սիրով և արդարամտությամբ ոչ միայն անձնական այլ նաև միմիանց նկատմամբ / ներհամայնքային կյանքում:



Ամրոցից հայ երիտասարդները ուղևորվեցին դեպի քաղաքի կենտրոնական՝ Սուրբ Յոզեֆ բողոքական եկեղեցի: Այստեղ մեր հյուրընկալ հայրենակցի Գրիգոր Ազարյանի ուղեկցությամբ բարձրացանք եկեղեցու գմբեթն ու ստացանք հետաքրքիր տեղեկություններ քաղաքի և

Եկեղեցու մասին: Բավականին հետաքրքիր էր եկեղեցու գմբեթում բնադրված բազեների և Նրանց հետազոտման գործընթացի մասին պատմությունը, որին կարող եք ծանոթանալ հետևելով հղմանը՝ <https://www.facebook.com/wanderfalkenheidelberg>

Իսկ թե ինչ սրահներ այցելեցինք եկեղեցում, գմբեթից բացի, դուք կարող եք ծանոթանալ նկարներով, իսկ այ տպավորությունները, մեր երիտասարդները մշտապես կհիշեն:



Նման հագեցած և նոր ծանոթություններով լի օրվա ավարտին քննարկվեցին երիտասարդական հավաքների հնարավոր ֆորմատներն ու դրանց արդյունավետությունը տարբեր տարիքային խմբերի և տարբեր հետաքրքրություններ ունեցող երիտասարդների համար: Երիտասարդները առիթ ունեցան մտքեր փոխանակելու իրենց հուզող հարցերի շուրջ, ինչպես նաև առաջարկներ արվեցին ապագայում երիտասարդական ծրագրերի կազմակերպման ու իրագործման վերաբերյալ:

Նման հանդիպումները լինելու են շարունակական: Վերջիններիս և երիտասարդական այլ ծրագրի մասին տեղեկանալու և մասնակից լիելու համար կարող եք հետևել համայնքի [պաշտոնական կայքին](#) կամ [ինստագրամյան](#) և [ֆեյսբուքյան](#) էջերին:

